

ՀՀ առողջապահության նախարարի
2014թ ապրիլ 18-ի N 844 - Ա հրամանի

**ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ, ԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ ԵՎ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՇՐՋԱՆՈՒՄ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ
ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ**

Հ/Հ	Գործողություն	Գործողության նկարագրություն	Պատասխանատու
1.	Պատվաստանյութերի ձեռքբերում, պահպանում, բաշխում	Պատվաստումների իրականացման համար անհրաժեշտ պատվաստանյութերը և պատվաստումների համար օժանդակ պարագաները ձեռք է բերվում Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից Հայաստանի Հանրապետության Իմունականիսարգելման ազգային ծրագրով նախատեսված պատվաստանյութերի հետ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից ներկայացված հայտի:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական բաժին «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ (այսուհետև՝ ՀՎԿԱԿ)
		Պատվաստումների իրականացման համար	ՀՎԿԿ-ի մանրէային

	անհրաժեշտ պատվաստանյութերը և պատվաստումների համար օժանդակ պարագաները պահեստավորվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ՀՎԿԱԿ-ում՝ համաձայն պատվաստանյութերի պահպանման ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	պատրաստուկների բաժին
	ՀՎԿԱԿ-ի կողմից պատվաստանյութերի և պատվաստումների համար օժանդակ պարագաների բաշխումն իրականացվում է համաձայն ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	ՀՎԿԿ-ի մանրէային պատրաստուկների բաժին
	Կցագրված պոլիկլինիկաներում պատվաստանյութերի և պատվաստումների համար օժանդակ պարագաների բաշխումն իրականացվում է գորակոչից առնվազն չորս ամիս առաջ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության կողմից գորակոչի հայտարարման ժամկետի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության: Կցագրված պոլիկլինիկաների կողմից ՀՎԿԱԿ է ներկայացվում ԲԻԿՊ պլանավորման առանձին հայտ ՝ համաձայն սահմանված ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	ՀՎԿԿ-ի մանրէային պատրաստուկների բաժին
	Զինծառայողների պատվաստումների համար անհրաժեշտ պատվաստանյութերի և պատվաստումների համար օժանդակ պարագաների բաշխումն իրականացվում է ըստ անհրաժեշտության՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության կողմից	ՀՎԿԿ-ի մանրէային պատրաստուկների բաժին

		ներկայացվող պահանջարկի:	
		Պատվաստանյութերի և պատվաստումների համար օժանդակ պարագաների հաշվառումն իրականացվում է կցագրված պոլիկլինիկաներում՝ Հայաստանի Հանրապետությունում հաստատված ձևաչափով գրանցամատյանում (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	Կցագրված պոլիկլինիկաներ
		Պատվաստանյութերի և պատվաստումների համար օժանդակ պարագաների շարժի վերաբերյալ հաշվետվությունները ներկայացվում են կցագրված պոլիկլինիկաների կողմից՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտ ընթացակարգերի և հաստատված վարչական վիճակագրական ձև Պ2/հ-ի՝ բացակայող պատվաստանյութերի անվանումները ներառելով «Այլ» տողում: Անցումային ժամանակաշրջանում լրացվում է առանձին Պ2/հ հաշվետվություն՝ պլանային կարգով իրականացվող պատվաստումների հաշվետվություններից տարանջատելու նպատակով:	Կցագրված պոլիկլինիկաներ
2.	Պատվաստումների կազմակերպում և իրականացում	Զինակոչիկների պատվաստումներն անցումային ժամանակաշրջանում իրականացվում են Հայաստանի Հանրապետության զինկոմիսարիատներին կցագրված պոլիկլինիկաներների մանկական պատվաստումային կաբինետում: Զինակոչիկների պատվաստումային սեսիայի ընթացքում մանկական ազգաբնակչության պատվաստումներ չեն պլանավորվում:	Կցագրված պոլիկլինիկաներ
		Մասնագետների ֆինանսավորումը սահմանվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից:	Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության ֆինանսատնտեսագիտական բաժին
		Զորակոչիկների և նախագորակոչիկների	Կցագրված պոլիկլինիկաներ

		պատվաստումների գործընթացի իրականացման համար կցագրված պոլիկլինիկաներներում նշանակվում է պատասխանատու անձ:	
		Զինկոմիսարիատները կցագրված պոլիկլինիկաներին նախապես տրամադրում են պատվաստման ենթակա անձանց անվանական ցուցակը՝ համաձայն Ձև 3-ի աղյուսակի:	Զինկոմիսարիատներ
		Զինկոմիսարիատները պատվաստված զորակոչիկների և նախագորակոչիկների անվանական ցուցակը տրամադրում են նրանց սպասարկող պոլիկլինիկաներին՝ ամբուլատոր քարտերում պատվաստումների վերաբերյալ տեղեկատվությունը գրանցելու նպատակով:	Զինկոմիսարիատներ
		Հետպատվաստումային շրջանում դիտարկումներ իրականացնելու համար կցագրված պոլիկլինիկայի պատասխանատուն կատարված պատվաստումների մասին անմիջապես հեռախոսով հայտնում է հաշվառման վայրի սպասարկող պոլիկլինիկային՝ որպես հեռախոսագիր:	Կցագրված պոլիկլինիկաներ
		Կցագրված պոլիկլինիկաները կազմում են պատվաստումների ժամանակացույցը՝ համաձայնեցնելով զինկոմիսարիատների հետ:	Կցագրված պոլիկլինիկաներ
		Կցագրված պոլիկլինիկաները պատվաստումներն իրականացնում են համաձայն հանրապետությունում գործող անվտանգ պատվաստումներին ներկայացվող պահանջների վերաբերյալ ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	Կցագրված պոլիկլինիկաներ
		2014 թվականին պատվաստման ենթակա են միայն 18-27 տարեկան զորակոչիկները՝ համաձայն Ձև 1	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ

		աղյուսակի: 15-16 տարեկանում կամ վերջին 10 տարվա ընթացքում ԱԴՓ-Մ պատվաստում չստացած զորակոչիկներին կատարվում է նաև ԱԴՓ-Մ պատվաստում:	
		2015-2016 թվականներին պատվաստման ենթակա են միաժամանակ 2 տարիքային խումբ՝ 18 – 27 տարեկան զորակոչիկները, ինչպես նաև 15-16 տարեկան զինկոմիսարիատում կցագրված նախազորակոչիկները՝ համաձայն Ձև 2 աղյուսակի	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ
		2017 թվականից պատվաստման ենթակա են միայն 15-16 տարեկան նախազորակոչիկները՝ համաձայն Ձև 2 աղյուսակի:	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ
		2014 թվականի ամառային զորակոչին պատվաստման ենթակա զինակոչիկները կցագրված պոլիկլինիկայում ստանում են իրենց պատվաստումները՝ զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից զորակոչիկի առողջական վիճակի պարտադիր գնահատումից հետո:	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ
		Զորակոչիկների կանխարգելիչ պատվաստումների իրականացումն ավարտվում է զորակոչի հայտարարումից առնվազն 2 ամիս առաջ	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ
		Կանխարգելիչ պատվաստումների ենթակա են բոլոր զորակոչիկները և նախազորակոչիկները՝ բացառությամբ բժշկական հակացուցում ունեցողների:	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ
		Կանխարգելիչ պատվաստումները գրանցվում են Հայաստանի Հանրապետությունում հաստատված ձևաչափով գրանցամատյանում: Նոր սկսվող գրանցամատյանի ☐ Հերթական համար ☐ այունակում համարակալումը սկսվում է 1-ից և շարունակվում է մինչև տվյալ գրանցամատյանի ավարտը:	Կցագրված պոլիկլինիկաներ

	Կանխարգելիչ պատվաստումները գրանցվում են նաև Ձև 3-ում: Զորակոչիկները և նախագորակոչիկները ներկայանում են կցագրված պոլիկլինիկաներ զինկոմիսարիատների պատասխանատուի ուղեկցությամբ: Զինկոմիսարիատի պատասխանատուն մնում է պոլիկլինիկայում մինչև պատվաստումների ավարտը:	
	Պատվաստումից առաջ պատվաստվողի օբյեկտիվ գնման տվյալները գրանցվում են Ձև 3-ի «Նկատառում» սյունակում, բժշկական հակացուցումների բացակայության դեպքում նշվում է «Ենթակա է», իսկ բժշկական հակացուցումների առկայության դեպքում՝ տվյալները /ջերմություն, ախտորոշումը/ գրանցվում են համապատասխան սյունակում:	Կցագրված պոլիկլինիկաներ
	Պատվաստումը գրանցվում է անմիջապես պատվաստումը կատարելուց հետո՝ ճշգրիտ պահպանելով հերթականությունը /օրինակ՝ երկդեղաչափ և բազմադեղաչափ պատվաստանյութի համար գրանցամատյանում հստակ պահպանվում է հաջորդ դեղաչափի ստացողների հերթականությունը/: Վերջինս անհրաժեշտ է հետպատվաստումային շրջանում անհատի առողջության ճշգրիտ գնահատման համար:	Կցագրված պոլիկլինիկաներ
	Զինկոմիսարիատի պատասխանատուն պոլիկլինիկայի պատասխանատուին ներկայացնում է տվյալ օրը պատվաստման ենթակա զորակոչիկների անվանական ցուցակը՝ համաձայն Ձև 3-ի: Անվանական ցուցակի համապատասխան	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ

	սյունակները լրացվում է պոլիկլինիկայի պատասխանատուի կողմից: Պատվաստումային սեսիայի ավարտից հետո անվանական ցուցակը ստորագրում են զինկոմիսարիատի և պոլիկլինիկայի պատասխանատուները:	
	Պատվաստված զորակոչիկների և նախագորակոչիկների անվանական ցուցակը պահպանվում է համապատասխան զինկոմիսարիատում՝ պատասխանատուի մոտ: Կցագրված պոլիկլինիկաներում թողնվում է պատճենը: Անցումային ժամանակահատվածում հետպատվաստումային հսկողության լիարժեք ապահովման նպատակով զինկոմիսարիատը անվանական ցուցակի պատճենը տրամադրում է նաև պատվաստվողին սպասարկող /հաշվառման/ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությանը:	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ
	Պատվաստումներից հրաժարումները և բժշկական հակացուցումները վարվում են կցագրված պոլիկլինիկաներում ձևավորված հանձնաժողովի կողմից՝ զինկոմիսարիատի պատասխանատուի մասնակցությամբ: Հրաժարականները և բժշկական հակացուցումները ամրագրվում են 2և 3-ում ներկայացված անվանական ցուցակում և պոլիկլինիկայում հրաժարականների ու բժշկական հակացուցումների գրանցամատյանում:	Կցագրված պոլիկլինիկաներ, Զինկոմիսարիատներ
	Զորակոչիկների և նախագորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումների վերաբերյալ ներկայացվում է հաշվետվություն՝ համաձայն Հայաստանի Հանրապետությունում գործող ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ	Կցագրված պոլիկլինիկաներ

		3108-Ա հրամանի համաձայն) և հաստատված վարչական վիճակագրական ձևի (ձև Պ1/հ): Անցումային ժամանակաշրջանում լրացվում է առանձին Պ1/հ հաշվետվություն՝ պլանային կարգով իրականացվող պատվաստումների հաշվետվություններից տարանջատելու նպատակով:	
		Հետպատվաստումային շրջանում գորակոչիկի առողջական վիճակի դիտարկումը և առողջական վիճակի պարտադիր գրանցումը, հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի գրանցումը, հաղորդումը և հետաքննությունն իրականացվում են համաձայն հանրապետությունում գործող ստանդարտ ընթացակարգերի (ՀՀ ԱՆ 28.12.2012թ թիվ 3108-Ա հրամանի համաձայն):	Կցագրված և սպասարկող պոլիկլինիկաներ
		Հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի վերլուծությունը պարբերաբար քննարկվում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ռազմաբժշկական ծառայությանն աջակցող հանձնաժողովում»:	Հայաստանի Հանրապետության առողջապահության և պաշտպանության նախարարություններ
3.	Կանխարգելիչ պատվաստումների կատարման տեխնիկան	ԿԿԽ /կարմրուկ, կարմրախտ, խոզուկ/ պատվաստումները կատարվում են աջ բազկի դելտայաձև մկանի դրսային մակերեսին ենթամաշկային ներարկումով 0.5 մլ դեղաչափով: ԿԿԽ-ն լուծվող կենդանի պատվաստանյութ է, վերականգնվում է միայն այն ժամանակ, երբ ներկա է առաջին պատվաստվող անձը: ՎՀԱ /հեպատիտ Ա/ պատվաստումները կատարվում են աջ ազդրի առաջադրսային հատվածում միջմկանային 1,0մլ դեղաչափով: Պնևմակոկային պոլիվալենտ պատվաստանյութը	Կցագրված պոլիկլինիկաներ

		կատարվում է ձախ ազդրի առաջադրսային հատվածում՝ միջմկանային, 0,5մլ դեղաչափով:	
		Մենինգակոկային կոնյուգացված քառավալենտ պատվաստանյութը կատարվում է ձախ բազկի դելտայաձև մկանի դրսային մակերեսին ենթամաշկային կամ միջմկանային /համաձայն պատվաստանյութի հրահանգի/ 0,5 մլ դեղաչափով:	
		Տուլարեմիայի դեմ պատվաստումը կատարվում է վերմաշկային, ձախ բազկի դրսային մակերեսի միջին երրորդականում՝ 2 կաթիլ կաթեցնել 3-4սմ հեռավորության վրա, յուրաքանչյուր կաթիլի վրա կատարել երկու զուգահեռ քերծվածք /սկարիֆիկատորով/ 1սմ երկարությամբ:	
		ԱԴՓ-Մ պատվաստանյութով պատվաստումները կատարվում են միջմկանային 0.5 մլ դեղաչափով՝ աջ բազկի դելտայաձև մկանի դրսային մակերեսին ԿԿԽ պատվաստումից առնվազն 2,5սմ հեռավորության վրա:	
		Լուծված (կենդանի և կոնյուգացված) և կոնսերվանտներ (պահպանիչներ) չպարունակող պատվաստանյութերը բացելուց հետո օգտագործվում են 6 ժամվա ընթացքում: 6 ժամից հետո, անկախ պատվաստանյութի մնացած քանակությունից, այն ոչնչացվում է /զցվում է անվտանգ այրման տուփի մեջ/: Եթե սրվակը /շշիկը ռետինե գլխիկով հերմետիկ փակված չէ, այն օգտագործվում է մինչև 2 ժամ, որից հետո ոչնչացվում է /զցվում է անվտանգ այրման տուփի մեջ/:	Կցագրված պոլիկլինիկաներ
4.	Հետպատվաստումային շրջանում զորակոչիկի	Հետպատվաստումային շրջանում կատարվում են ՝ 1) դիտարկումներ՝ բուժաշխատողի կողմից բոլոր	Կցագրված պոլիկլինիկաներ՝ պատվաստումից հետո առաջին 30

	առողջական վիճակի դիտարկում	պատվաստանյութերի ներմուծումից հետո 0-48 ժամվա ընթացքում, կարմրուկ և կարմրախտ բաղադրիչներ պարունակող պատվաստանյութերի դեպքում նաև՝ 6-12-րդ օրերի ընթացքում, տուլարեմիա բաղադրիչ պարունակող պատվաստանյութերի դեպքում 4-15-րդ օրերին /քերծվածքի տեղում՝ կարող է առաջանալ հիպերեմիա, այտուց, բշտեր՝ հետագայում կեղևի առաջացումով, կարող է առաջանալ նաև հարակից ավշային հանգույցների մեծացում/ 2) գրանցումներ՝ բոլոր պատվաստումներից հետո բուժքույրը դիտարկում է առողջական վիճակը 3 օրվա ընթացքում և տեղյակ է պահում բժշկին՝ տեղային և ընդհանուր ՀԱԴ-երի մասին: 3-րդ օրը ռեակցիայի բացակայության դեպքում բուժքույրը կատարում է գրանցում ՀԱԴ-ի բացակայության վերաբերյալ, ԿԿԽ պատվաստման դեպքում՝ նաև 12-րդ օրը /դիտարկումը կատարում է 6-12 օրերի ընթացքում/, իսկ տուլարեմիայի պատվաստման դեպքում նաև 15-րդ օրը /դիտարկումը կատարվում է 4-15 օրերի ընթացքում/: Սովորական սպասվող և անսովոր ՀԱԴ-երի դեպքում գրանցումը կատարում է բժիշկը՝ վերը նշված օրերին: ՀԱԴ-ի առկայությունը (թեթև և ծանր) գրանցվում է ՀԱԴ-ի առաջացման օրը: Բուժաշխատողը ծանր հետպատվաստումային անբարեհաջող դեպքերը կասկածելու դեպքում պարտավոր է անմիջապես տեղեկացնել ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպության ղեկավարին և տալ շտապ հաղորդում ՀՎԿԱԿ /հեռախոս՝ 625970 կամ 610417/: Հաղորդման ենթակա ՀԱԴ-երը ներակայացված են Ձև 4-ում:	րոպեի ընթացքում Սպասարկող ամբուլատոր – պոլիկլինիկական կազմակերպություններ՝ կցագրված պոլիկլինիկաների կողմից հաղորդումը ստանալուց հետո և/կամ զինկոմիսարիատների կողմից անվանական ցուցակը ստանալուց հետո: Կցագրված պոլիկլինիկաներ Սպասարկման /հաշվառման/ ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպություններ
--	-----------------------------------	--	--

5.	Վերահսկողություն և մոնիթորինգ	Զորակոչիկների և նախագորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացի նկատմամբ վերահսկողությունը և մոնիթորինգն իրականացվում են Հայաստանի Հանրապետության առողջապահության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունների կողմից համատեղ կամ առանձին-առանձին՝ նախնական փոխհամաձայնությամբ:	Հայաստանի Հանրապետության առողջապահության և պաշտպանության նախարարություններ
		Զորակոչիկների և նախագորակոչիկների շրջանում կանխարգելիչ պատվաստումների գործընթացի վերահսկողության նպատակով կազմավորվում է «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ռազմաբժշկական ծառայությանն աջակցող հանձնաժողովին» կից աշխատանքային խումբ՝ ընդգրկելով առողջապահության և պաշտպանության նախարարությունների ներկայացուցիչներ: Արդյունքները քննարկվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ռազմաբժշկական ծառայությանն աջակցող հանձնաժողովի» կողմից:	Հայաստանի Հանրապետության առողջապահության և պաշտպանության նախարարություններ
6.	Տեղեկատվության փոխանակում	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 10-ը Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տրամադրում է տեղեկատվություն հաջորդ տարվա գորակոչի ընթացքում գորակոչիկների և նախագորակոչիկների նախնական թվի մասին:	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն
		Հայաստանի Հանրապետության պաշտպանության	Հայաստանի Հանրապետության

		նախարարությունը յուրաքանչյուր զորակոչից չորս ամիս առաջ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը տեղեկացնում է զորակոչի ստույգ ժամկետի մասին	պաշտպանության նախարարություն
		Հայաստանի Հանրապետության զինկոմիսարիատները պատվաստումներից երկու շաբաթ առաջ կցագրված պոլիկլինիկաներին նախապես տրամադրում են պատվաստման ենթակա զորակոչիկների և նախագորակոչիկների ցուցակը:	Զինկոմիսարիատներ
		Կցագրված պոլիկլինիկաներն ըստ անվանական ցուցակի կազմում են ժամանակացույցը և համաձայնեցնում զինկոմիսարիատի հետ:	Կցագրված պոլիկլինիկաներ
		Հայաստանի Հանրապետության զինված ուժերում գրանցված կառավարելի վարակիչ հիվանդության յուրաքանչյուր կասկածելի դեպք, ինչպես նաև հետպատվաստումային անբարեհաջող դեպքերը քննարկվում են «Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ռազմաբժշկական ծառայությանն աջակցող հանձնաժողովի» կողմից:	Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համակարգում ռազմաբժշկական ծառայությանն աջակցող հանձնաժողով

**ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉՎՈՂ 18 – 27 ՏԱՐԵԿԱՆ
ԶՈՐԱԿՈՉԻ ԵՆԹԱԿԱ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԵՆԹԱԿԱ ԱՆՁԱՆՑ
ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ**

Հ/Հ	Պատվաստանյութի անվանում	Հիվանդություններ	Դեղաչափ
1.	ԿԿԽ	Կարմրուկի, կարմրախտի և խոզուկի դեմ	1 դեղաչափ
2.	ՎՀԱ պատվաստանյութ	Հեպատիտ Ա-ի դեմ	1 դեղաչափ մեծահասակների
3.	Պնևմակոկային պոլիվալենտ պատվաստանյութ	Պնևմակոկային վարակների դեմ	1 դեղաչափ
4.	Մենինգակոկային կոնյուգացված քառավալենտ պատվաստանյութ	Մենինգակոկային վարակների դեմ	1 դեղաչափ
5.	Տուլարեմիայի պատվաստանյութ	Տուլարեմիայի դեմ	1 դեղաչափ

*ԱԴՓ-Մ պատվաստումները կատարվում են, եթե 15-16 տարեկանում կամ վերջին 10 տարվա ընթացքում գորակոչիկը չի պատվաստվել:

**ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ՊԱՏՎԱՍՏՈՒՄՆԵՐԻ
ՑԱՆԿ**

Հ/Հ	Պատվաստանյութի անվանում	Հիվանդություններ	Դեղաչափ
1.	ԱԴՓ-Մ	Դիֆթերայի և փայտացման դեմ	1 դեղաչափ
2.	ԿԿԽ*	Կարմրուկի, կարմրախտի և խոզուկի դեմ	1 դեղաչափ
3.	ՎՀԱ պատվաստանյութ	Հեպատիտ Ա-ի դեմ	1 դեղաչափ մեծահասակների
4.	Պնևմակոկային պոլիվալենտ պատվաստանյութ	Պնևմակոկային վարակների դեմ	1 դեղաչափ
5.	Մենինգակոկային կոնյուգացված	Մենինգակոկային վարակների դեմ	1 դեղաչափ

	քառավալենտ պատվաստանյութ		
6.	Տուլարեմիայի պատվաստանյութ	Տուլարեմիայի դեմ	1 դեղաչափ

* 2018 թվականից ԿԿԽ պատվաստումները կիրականացվեն միայն երկու դեղաչափ պատվաստում չունեցող նախագորակոչիկներին:

ԱՆՎԱՆԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ՊԱՏՎԱՍՏՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԶՈՐԱԿՈՉԱՅԻՆ ՏԱՐԻՔԻ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՆԱԽԱԶՈՐԱԿՈՉԻԿՆԵՐԻ

Հ/Հ	Անուն, ազգանուն, հայրանուն	Հասցե, հեռախոս	Սպասարկող պոլիկլինիկաներ /հաշվառման վայրի/	Ծննդյան օր/ամիս / տարի	Բժշկական հանձնաժողովի գնահատում*	Պատվաստանյութի անվանում , սերիա, դեղաչափ	Պատվաստման օր/ամիս/ տարի	Պատվաստվողի ստորագրություն	Նկատառում***

* Բժշկական հակացուցումների բացակայության դեպքում նշվում է «Ենթակա է», առկայության դեպքում նշվում է ախտորոշումը, ջերմությունը և այլն:

** Պատվաստվողի հրաժարվելու դեպքում նշվում է «Հրաժարվում է»:

Ց ԱՆԿ

Հաղորդման և հետաքննության ենթակա հետպատվաստումային անբարեհաջող դեպքերի

Առաջացման ժամկետ (պատվաստումից հետո)	Հետպատվաստումային անբարեհաջող դեպքեր
24 ժամվա ընթացքում	• Ծանր ալերգաբանական ռեակցիա • Անաֆիլաքսիա • Հարատև անմխիթար լաց (3 ժ և ավելի) • Հիպոտոնիկ հիպոռեսպոնսիվ էպիզոդ (ՀՀԷ, կոլլապս) • Տոքսիկ շոկի համախտանիշ
7 օրվա ընթացքում /եզակի դեպքերում ավելի ուշ/	• Ծանր տեղային ռեակցիա • Սեպսիս • Թարախակույտ՝ ներարկման տեղում, բակտերիալ
1- 6* շաբաթվա ընթացքում	• Թարախակույտ՝ ներարկման տեղում, ստերիլ
15 օրվա ընթացքում	• Ցնցումներ, ներառյալ՝ ֆեբրիլ (6-12 օրը՝ ԿԿԽ; 0-2 օրը մնացած պատվաստումները) • Էնցեֆալոպաթիա՝ ԿԿԽ, 6-12 օրը
3 ամսվա ընթացքում	• Բազկային ներիտ (2-28 օրը՝ փայտացման անատոքսին) • Թրոմբոցիտոպենիա (15-35 օրը՝ ԿԿԽ)
Ջերմության բարձրացում (0-48 ժամվա ընթացքում)	• 39,5 °C և բարձր
30 օրվա ընթացքում	Ցանկացած մահվան, հոսպիտալացման կամ այլ ծանր և անսովոր դեպք, որոնք բուժաշխատողի կարծիքով կապված են պատվաստման հետ

*1-6 շաբաթը ստերիլ թարախակույտի պահպանման տևողությունն է: